



«ԳՅՈՒՄՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

Անկախ աուդիտորական հաշվետվություն

2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեկազմած տարվա
ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
հունիս 2025 թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ



Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ N 1 20 0284
Տրված՝ 18.12.2020 Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պալատ
հասարակական կազմակերպության խորհրդի թիվ 11ա որոշմամբ

«Փերֆեկթ Աուդիտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010
Տիգրան Մեծի 4
Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Գյումրու բժշկական կենտրոն»
փակ բաժնետիրական ընկերության
ղեկավարությանը

Վերապահումով դրական կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ «Վերապահումով դրական կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հանգամանքի հնարավոր ազդեցությունից, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում 2024 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Վերապահումով դրական կարծիքի հիմքեր

Մենք նշանակվել էինք Ընկերության աուդիտոր 2024 թվականի դեկտեմբերի 31-ից հետո, հետևապես, հնարավորություն չենք ունեցել հետևելու հիմնական միջոցների և պաշարների գույքագրման գործընթացին տարվա վերջում:

Մենք անկարող էինք իրականացնել այլ ընտրանքային ընթացակարգեր, որպեսզի ինքներս համոզվեինք 2024 թվականի հիմնական միջոցների և պաշարների մնացորդների ճշտությամբ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են համապատասխան՝ 7 555 232 հազար և 182 395 հազար դրամ գումարներով:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Սույն ստանդարտներով սահմանված մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն

Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՎՄՍԻՎ վարքագիրը), և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀՎՄՍԻՎ վարքագրի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր՝ վերապահումով դրական կարծիքը արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, անհրաժեշտության դեպքում՝ անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, որը ներառում է մեր կարծիքը:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, ինչը, սակայն, երաշխիք չէ, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումները, եթե այդպիսիք առկա են: Ֆինանսական հաշվետվություններում խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում:

Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական

խեղաթյուրման չբացահայտման դիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման դիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Դիտարկում ենք աուդիտին առնչվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող տեղեկատվության բացահայտումների խելամուտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում հղում կատարել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այսուհանդերձ, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունների մասին:

Հունիս 27, 2025 թ.

Աուդիտոր՝
Հրաչյա Հովհաննիսյան

Տնօրեն-բաժնետեր, տ.գ.թ.
Աղավնի Բաբայան



ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա համար

Ցուցանիշի անվանումը Շարունակվող գործունեությունից	Ժնթգ	հազար դրամ	
		31.12.2023թ.	31.12.2024թ.
Հասույթ	4.1	2,936,181	3,871,552
Վաճառքի ինքնարժեք	4.2	(3,036,187)	(4,135,448)
Համախառն շահույթ (վնաս)		(100,006)	(263,896)
Այլ եկամուտներ	4.3	117,081	390,249
Վարչական ծախսեր	4.4	(242,380)	(324,399)
Այլ ծախսեր	4.5	(49,702)	(77,806)
Ֆինանսական ծախսեր	4.6	(35,252)	(57,995)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		(310,258)	(333,847)
Շահութահարկի գծով ծախս		0	
Տարվա շահույթ(վնաս) շարունակվող գործունեությունից		(310,258)	(333,847)
Ընդհատված գործունեության զուտ շահույթ (վնաս)			
Ընդամենը տարվա շահույթ (վնաս)		(310,258)	(333,847)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքներ		(310,258)	(333,847)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2025 թվականի հունիսի 10-ին



Տնօրեն
Ս. ԼՍԻ ՀԱՉՎԱԿԱՍԻ

[Handwritten signature]

Ա. Իսահակյան
Լ. Խաչատրյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

		ծնթգ	31.12.2023թ.	31.12.2024թ.
ԱԿՏԻՎ				
1. Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4.80	5,571,665	7,555,232	
Ֆին. վարձակալությամբ ստացված հիմնական միջոց		178,389	331,612	
Ոչ նյութական ակտիվներ	4.90	168,719	472,332	
Հետաձգված հարկային ակտիվ				
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		5,918,773	8,359,176	
2. Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	4.10	149,700	182,395	
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4.11	207,036	184,504	
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար				
Տրամադրված կարճաժամկետ փոխառություն	4.12	650		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4.13	99,826	12,127	
Այլ ընթացիկ ակտիվներ				
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		457,211	379,025	
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ				
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		6,375,984	8,738,201	
ՊԱՍԻՎ				
1. Սեփական կապիտալ				
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	4.14	4,311,800	4,901,800	
Վերագնահատումից արժեքի աճ		2,018,904	3,590,121	
Կուտակված շահույթ		(1,500,525)	(1,850,052)	
Պահուստային կապիտալ		4,467	4,467	
Ընդամենը սեփական կապիտալ		4,834,646	6,646,336	
2. Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	4.15	224,053	445,657	
Ակտիվներին վերաբերող շնորհներ	4.16	235,508	397,271	
Հետաձգված հարկային պարտավորություններ	4.70	235,848	215,130	
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		695,409	1,058,058	
3. Ընթացիկ պարտավորություններ				
Կարճաժամկետ փոխառություն	4.17	0	128,939	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4.18	616,589	609,976	
Շահութահարկի գծով պարտավորություն				
Պահուստներ	4.19	179,816	238,267	
Այլ ընթացիկ պարտավորություն	4.20	49,524	56,626	
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		845,929	1,033,807	
Օտարման խմբում ներառված որպես վաճառքի համար դասակարգված պարտավորություններ				
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		6,375,985	8,738,201	

Տնօրեն

Գլխ. Հաշվապահ



[Handwritten signature]

Ա. Իսահակյան

Լ. Խաչատրյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին

ավարտվող տարվա համար

հազար դրամ

Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2022թ.

Հաշվապահական հաշվառման թաղարանության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և նական սխալների ճշգրտումը

Վերահաշվարկված մնացորդը

Հաշվետու տարվա շահույթ կամ վնաս Ներքին տեղաշարժ
Մննդական կապիտալի հետ այլ գործարքներ
Կապիտալի նվազեցում

Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2023թ.

Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2023թ.

Հաշվապահական հաշվառման թաղարանության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և նական սխալների ճշգրտումը

Վերահաշվարկված մնացորդը

Միացման ձևով կազմակերպությունների վերականգնակերպում
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք
Ներքին տեղաշարժ
Մննդական կապիտալի հետ այլ գործարքներ

Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2024թ.

Կանոնադրական կապիտալ	Վերագնահատումից արժեքի աճ	Կուտակված շահույթ (վնաս)	Պահուստային կապիտալ	Ընդամենը
4,311,800	2,080,191	(1,281,008)	4,467	5,115,450
				0
4,311,800	2,080,191	(1,281,008)	4,467	5,115,450
		(310,258)		(310,258)
	(61,287)	61,287		0
		29,454		29,454
				0
4,311,800	2,018,904	(1,500,525)	4,467	4,834,647
4,311,800	2,018,904	(1,500,525)	4,467	4,834,647
		(29,752)		(29,752)
4,311,800	2,018,904	(1,530,276)	4,467	4,804,895
590,000	57,293	(60,653)		586,640
	1,571,350	(333,847)		1,237,503
	(57,427)	57,427		0
		17,297		17,297
4,901,800	3,590,121	(1,850,052)	4,467	6,646,336

Տնօրեն
Գլխ. Հաշվապահ

Ա. Իսահակյան
Լ. Խաչատրյան



[Handwritten signature]

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
"Գյումրի բժշկական կենտրոն" ՓԲԸ

2024թ. դեկտեմբերի 31-ին
 ավարտվող տարվա համար

	31.12.2024թ.	31.12.2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա վնաս	-333,847	
Ճշգրտումներ		
Մաշվածություն և ամորտիզացիա	457,160	
Վերագնահատումից տարբերություն	38	
Ֆինանսական ծախս	57,995	
Շնորհներից եկամուտ	-332,862	
Հիմնական միջոցի օտարումից վնաս/օգուտ		
Պահուստի շարժ	33,281	
Գործառնական շահույթ չախբան շրջանառու կապիտալի փոփոխությունները	-118,236	0
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	22,532	
Պաշարների փոփոխություն	-32,695	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	-6,613	
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	-135,012	0
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	-135,012	0
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Տրամադրված փոխառությունից	650	
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	650	0
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ներդրված ավանդներից		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	72,804	
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	72,804	0
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-72,154	0
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Բաժնեմասերի թողարկումից		
Ստացված շնորհներից	5,499	
Ստացված վարկերից և փոխառություններից	395,000	
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	400,499	0
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից	279,126	
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	1,869	
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	280,995	0
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	119,504	0
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	-87,662	0
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	-38	
Դրամական միջոցների մնացորդը տարվա սկզբին	99,826	99,826
Դրամական միջոցների մնացորդը տարվա վերջին	12,127	99,826



[Handwritten signature in blue ink]

Ա. Իսահակյան
 Լ. Խաչատրյան

Ծանոթագրություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալից մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ

1. Տեղեկատվություն ընկերության մասին

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 25-ի թիվ 573-Ա որոշման «Սամարիթեր Համաձայն ՀՀ կառավարության 2020թ. նոյեմբերի 17-ի թիվ 1805-Ն որոշման «Գյումրու Համաձայն ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 20-ի թիվ 805-Ն որոշման «Գյումրու Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գ. Նժդեհի փողոց 3/3: Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

ա) հիվանդանոցային և արտահիվանդանոցային բուժօգնություն և սպասարկում

Ընկերության աշխատակիցների թվաքանակը 31.12.2024թ.-ին կազմել է 828 մարդ (31.12.2023թ.-ին 629 մարդ):

2. Պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀ օրենսդրությանը ՖՀՄՍ -ները ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին

- ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտները (IFRS)
- Հաշվապահական հաշվառման Միջազգային Ստանդարտները (IAS)
- Մեկնաբանությունները՝ թողարկված ֆինանսական հաշվետվությունների Միջազգային

2.2 Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման

2.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով,

2.4. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն (դրամ) է, որը

2.5. Դաբոցությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ համապատասխան կազմման համար

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են նշանակալի հարցերի նկատմամբ Ներկայացման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները կազմված են համաձայն ֆինանսական Ստորն ներկայացված են հաշվապահական հաշվառման հիմնական

3.1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում ընթացիկ և ոչ ընթացիկ Ակտիվը համարվում է ընթացիկ, երբ

- ա) ակնկալվում է այն իրացնել, վաճառել կամ սպառել սովորական գործառնական փուլի
- բ) պահվում է հիմնականում առևտրական նպատակներով,
- գ) ակնկալվում է այն իրացնել հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա
- դ) այն դրամական միջոց է կամ դրամական միջոցների համարժեք, բացառությամբ երբ դրա

- ա) ակնկալվում է այն մարել սովորական գործառնական փուլի ընթացքում,
- բ) պահվում է հիմնականում առևտրական նպատակներով,
- գ) ենթակա է մարման հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում
- դ) կազմակերպությունը չունի անվերապահ իրավունք՝ հետաձգելու մարումը հաշվետու

Բոլոր այլ պարտավորությունները համարվում են ոչ ընթացիկ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում ծախսերը Տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է միայն մեկ տարվա Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում և ներկայացվում է Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում տոկոսների գծով Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում շահաբաժինների գծով Ֆինանսական հաշվետվություններում էական տեղեկատվությունը ներկայացվում է

3.2 Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:
 Իրացման զուտ արժեքը դա սովորական գործունեության ընթացքում հնարավոր վաճառքի Կազմակերպությունում արտադրանքը թողարկվում է շարունակական հիմունքով մեծ
 Պաշարների նյութեր բաժնում ներառվում են նաև այն ակտիվները, որոնց ծառայության

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների բոլոր դասերը հաշվառվում են վերագնահատված արժեքով՝ հանած
 Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցի միավորի ձեռքբերմանը կամ
 Հիմնական միջոցների հետագա ծախսումները՝ ներառյալ նշանակալի մասերի
 Հողամասը և շենքերը առանձին ակտիվներ են դիտարկվում և հաշվառվում են առանձին-
 Հիմնական միջոցների մնացորդային արժեքը որոշվում է որպես այն գումարը, որով
 Այն դեպքերում, երբ ակտիվը օգտակար ծառայության վերջում որպես թափոն չունի զգալի
 Մաշվածության մեթոդը արտացոլում է այն մոդելը, որով կազմակերպությունը ակնկալում է
 Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում կազմակերպության տնօրենի հրամանով
 Հիմնական միջոցների օգտակար ծառայությունները որոշելու համար կազմակերպությունն
 • Շենքեր շինություններ 20 - 90 տարի,
 • Մեքենա-սարքավորումներ 5 - 20 տարի,
 • Բեռնատար ավտոմեքենաներ 5 տարի,
 • Մարդատար ավտոմեքենաներ 5 տարի,
 • Տնտեսական և գրասենյակային գույք 5 տարի,
 • Համակարգչային տեխնիկա 1 տարի
 • Վերագնահատումից տարբերություն:

Ակտիվի մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ այն մատչելի է օգտագործման համար,

3.4. Ներդրումային գույք

Ներդրումային գույք է համարվում այն գույքը (հող կամ շինություն), որը պահվում է

3.5. Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և օտարման խումբ

Ոչ ընթացիկ ակտիվները (կամ օտարման խումբը) դասակարգվում են որպես վաճառքի
 Հիմնական միջոցի, ոչ նյութական ակտիվի, ներդրումային գույքի, բաժնեմասնակցության
 Որպես վաճառքի համար պահվող ակտիվ կամ օտարման խմբի բաղադրիչ

3.6. Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներն ունեն որոշակի օգտակար ծառայության

Ձեռնարկատիրական գործունեության միավորմամբ ձեռքբերված ոչ նյութական Ներստեղծված ոչ նյութական ակտիվների գծով կատարված հետազոտության Ներստեղծված ոչ նյութական ակտիվների գծով կատարված մշակման ծախսումները՝

- ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել,
 - առկա է ակտիվը ավարտուն վիճակի հասցնելու, օգտագործելու կամ վաճառելու
 - ապահովված է մշակումն ավարտելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը,
 - հնարավոր է ցուցադրել այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու ապագա Մնացած մշակման ծախսումները ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախս:
- Ամորտիզացիան հաշվառվում է գնահատված օգտակար ծառայության ընթացքում ուղիղ Օգտակար ծառայության գնահատված ժամկետները 10 տարի են:
- Ոչ նյութական ակտիվների հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն

3.7. Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում
Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների ապագա հոսքերը երբ առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, ապա Անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվների, անավարտ ոչ նյութական ակտիվների և

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային

3.8. Արտաժույթ

Կազմակերպության գործունեության ֆունկցիոնալ արժույթ է համարվում ՀՀ դրամը, քանի Արտաժույթով գործառնությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են Արտաժույթով գործարքների և՛ սկզբնական ճանաչման համար և՛ հետագա վերաչափման

3.9. Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող Այն ակտիվն է համարվում որակավորվող, որին անհրաժեշտ է զգալի Փոխառության ծախսումները կարող են չկապիտալացվել, երբ շարունակական հիմունքով Կապիտալացվող փոխառության ծախսումները նվազեցվում են բացառապես

3.10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների և դրանց համարժեքների բաղկացուցիչներ են համարվում

3.11. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Վաճառքից հասույթը ճանաչվում է այն պահին, երբ փոխանցվում են սեփականության հետ Ռիսկերն ու հատույցները համարվում են փոխանցված այն պահին, երբ ապրանքները եթե վճարման ժամկետը հետաձգվում է 60 օրից ավել ժամանակահատվածով, ապա Այն դեպքերում, երբ հատուցման անվանական արժեքը գերազանցում է սովորաբար Այն դեպքերում, երբ հատուցման անվանական արժեքը չի գերազանցում սովորաբար Մինչև 60 օր վճարման ժամկետով իրացումների դեպքում տոկոսների հաշվարկ չի Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ Այն դեպքերում, երբ դա հնարավոր է ավարտվածության աստիճանը որոշվում է

Տոկոսային հասույթը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքով, այնպես ինչպես

3.12. Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով Այն շնորհները, որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել Այլ պետական շնորհները (եկամուտներին վերաբերող շնորհներ) սկզբնապես ճանաչվում

3.13. Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ որպես անցյալ դեպքերի արդյունք կազմակերպությունն Երաշխիքների և անբարենպաստ պայմանագրերի գծով պահուստները չափվում են Ապատեղակայման և տեղանքի բարեկարգման գծով պահուստները չափվում են Արձակուրդային վճարների և հավանական պարզևավճարների գծով պահուստները

3.14. Էական սխալներ

Էական սխալներ՝ ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված սխալներ են, որոնք Նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը

3.15. Ֆինանսական գործիքներ

Բոլոր ֆինանսական ակտիվները ու ֆինանսական պարտավորությունները սկզբնական Ֆինանսական ակտիվներ

- Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական
- Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ,
- Տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական պարտավորություններ

- Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական
- Այլ ֆինանսական պարտավորություններ:

Կանոնավոր կերպով գնումների և վաճառքների դեպքում ֆինանսական ակտիվներն ու Վարկերի և փոխառությունների գծով ֆինանսական ակտիվները ու

Ֆինանսական գործարքի հետ կապված ծախսումները ներառվում են համապատասխան Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշվում է շուկայի Անտոկոս կամ ցածր տոկոսով ստացված ցպահանջ վարկերի և փոխառությունների

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքով և Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են միայն այն

3.16. Ֆինանսական գործիքների արժեզրկում

Ֆինանսական ակտիվների համար յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումը Առևտրային դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումը գնահատվում է հավաքական Եթե հետագայում արժեզրկումից կորուստը նվազում է որպես հետևանք մի դեպքի, որը

4. Բացահայտումներ էական հոռոգվածների վերաբերյալ

4.1. Հասույթ

	000դրամ	
	31.12.23թ.	31.12.24թ.
Ծառայությունների մատուցում	2,936,181	3,871,552
Ընդամենը	2,936,181	3,871,552

4.2. Վաճառքի ինքնարժեք

	'000դրամ	
	31.12.23թ.	31.12.24թ.
Դեղորայք	589,539	688,696
Փոխհատուցումներ աշխատակիցներին	1,677,086	2,574,804
Մաշվածություն	412,154	473,645
Վառելիք	400	2,750
Նյութեր	28,847	5,765
Այլ ծախսեր	328,161	389,788
Ընդամենը	3,036,187	4,135,448

4.3. Այլ եկամուտներ

	'000դրամ	
	31.12.23թ.	31.12.24թ.
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ	154	
Պահեստամասերի վաճառքից եկամուտ		
Գործառնական վարձակալությունից եկամուտներ	15,373	31,128
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտներ	94,212	210,418
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտներ		122,444
Գործառնական այլ եկամուտ	7,342	26,259
Ընդամենը	117,081	390,249

4.4. Վարչական ծախսեր

	000դրամ	
	31.12.23թ.	31.12.24թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին	197,288	258,580
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր	15,064	8,440
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,684	2,084
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	2,535	3,870
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2,453	2,820
Առդիտորական ծառայության ծախսեր	3,924	6,234
Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովագրության ծախսեր	1,314	5,105
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	5,348	8,250
Վարչական այլ ծախսեր	12,769	29,017
Ընդամենը	242,380	324,399

4.5. Այլ ծախսեր

	000դրամ	
	31.12.23թ.	31.12.24թ.
1. Իրացման ծախսեր	3,382	3,554
Մարկետինգի և գովազդի ծախսեր	3,382	3,554
2. Գործառնական այլ ծախսեր	42,289	74,252
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	14,249	15,295
Խոտանված նյութերի հետ կապված ծախսեր	4,503	8,746
Դեբիտորական պարտքերի կորուստների գծով ծախս	214	
Շնորհ ստացված ակտիվների մաշվածության ծախս		16,697
ՀՄ լուծարման ծախսեր	952	
Ժամ, շահագ, հանված ՀՄ պահպանման ծախսեր		
Գործառնական այլ ծախսեր	22,370	33,514
3. Այլ ոչ գործառնական ծախսեր	4,031	0
Փոխարժեքի տարբերությունից վնաս	0	
Անհատույց տրված ակտիվների գծով ծախս	4,031	
Ընդամենը	49,702	77,806

4.6. Ֆինանսական ծախսեր

	000դրամ	
	31.12.23թ.	31.12.24թ.
Վարկերի գծով տոկոսային ծախսեր	22,283	38,519
Ֆինանսական վարձակալության գծով տոկոսային ծախսեր	12,969	19,475
Ընդամենը	35,252	57,995

4.7. Հետաձգված հարկային պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվներ	01/01/2023	Այլ համապարփակ արդյունքում ճանաչված	31/12/2023
Չօգտագործված արձակուրդայինի պահուստ	32,366.95	10,521.04	42,887.99
Անհուսալի Դեբիտորական պարտքերի պահուստ	115.72	(115.72)	0.00
Հարկային վնաս	17,880.53	(3,444.67)	14,435.86
Ընդամենը	50,363.20	6,960.65	57,323.85
Հետաձգված հարկային Պարտավորություններ	01/01/2024	Այլ համապարփակ արդյունքում ճանաչված	31/12/2024
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվների վերագնահատում	(282,790.81)	10,336.79	(272,454.02)
Ընդամենը	(282,790.81)	10,336.79	(272,454.02)
Զուտ արդյունք	(235,848.00)	17,297.44	(215,130.17)

4.8 Հիմնական միջոցներ

000 դրամ

	Շենքեր	Մեքենաներ և սարքավորումներ, կառուցվածքներ	Տրանսպորտային միջոցներ	Բնօրինակ սարքավորում և համակարգչային սինթեզ	Առարկական գույք, ստեղծված գույք, գործիքներ	Հողամասեր	Անավերջ ոչ ընթացիկ ներդրված ակտիվներ	Ընդամենը
Միջոցնական արժեք								
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	3,961,789	155,673	11,720	1,324,433	247,955	601,800		6,303,370
Ավելացումներ այդ թվում	10,629	2,502		42,918	8,975			65,025
Ներդրված փոփոխություններ								0
Նվազեցումներ		76	3,860	1,170				5,106
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	3,972,418	158,099	7,860	1,366,181	256,930	601,800	0	6,363,289
Ավելացումներ այդ թվում	1,366,181	69,585	42,011	277,686	56,389	607,704	500	2,440,056
Վերազնադատումներ	1,041,186					525,051		1,566,237
Նվազեցումներ		416		825	2,530			3,772
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	5,358,599	227,268	49,871	1,643,042	310,789	1,209,504	500	8,799,573
Կուտակված մաշվածություն								
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	62,203	32,614	826	297,650	3,233	0	0	396,526
Տարվա մաշվածությունը այդ թվում	80,867	24,457	2,639	242,771	106,798			457,532
Ներդրված փոփոխություններ								0
Նվազեցումներ		9,714	915	51,805				62,434
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	143,070	47,357	2,551	488,616	110,031	0	0	791,624
Տարվա մաշվածությունը այդ թվում	95,179	30,967	6,509	263,532	60,972			457,160
Վերազնադատումներ	785							785
Նվազեցումներ	2,323	211		825	1,083			4,442
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	235,927	78,114	9,060	751,322	169,919	0	0	1,244,342
Զույգ հաշվեկշռային արժեք								
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	3,829,348	110,742	5,309	877,565	146,899	601,800	0	5,571,665
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	5,122,672	149,154	40,811	891,720	140,870	1,209,504	500	7,555,232

* 2024թ. հիմնական միջոցների ավելացումները հիմնականում ներառում են.

Անվանումը	000. դրամ
Շենք, արհեստարան (Գ. Նոյնի 5)	214,390
Համակարգչային տոմոգրաֆ SIEMENS SOMATOM GO UP	177,000
Տանիք (ՄԻԳ)	113,783
Հեմոդիալիզի ջրի մաքրման կայան (Օսմոս)	42,480
Հողամաս Գ. Նոյնի 5 1.3333 հա	38,922
Հողամաս Գ. Նոյնի 3/6 0.21124 հա	36,727
Նստավ օգնության մեքենա Jin Bei	21,371
	644,672

* 2024թ. հիմնական միջոցների նվազեցումները հիմնականում ներառում են.

Անվանումը	000. դրամ
Վրան ձնեռալի /30 հոգու համար, գերմանական/	1,500
Պարտականից ցանցեր	280
Գեներատոր /գերմանական/	250
Ծրագիր Money Lux	210
	2,240

* Հաշվետու ամսագրի դրությամբ Ընկերությունում առկա են վրո հաշվեկշռային արժեքով հաշվառվող 38,227,778 դրամ սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցներ:

* Ընկերությունը ֆին. վարձակալությամբ ձեռք է բերել հետևյալ հիմնական միջոցները

	000. դրամ
- Ուլտրաձայնային համակարգ Voluson S10, համալրված 4 տվիչներով	36,080
- Ավտոմեքենա NISSAN X.T RAIL 2.5	14,375
- Համակարգչային տոմոգրաֆիկ համալիր SIEMENS Emotion Somatom 16 slice	115,164
Համակարգչային տոմոգրաֆ SIEMENS SOMATOM GO UP	165,993
	331,612

4.9 Ոչ նյութական ակտիվներ

000 դրամ

	Հանկարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրերի (ֆրանշիզաների) ամրոտիզացիա	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	6,151	110	164,464	170,724
Ավելացումներ այդ թվում Վերազնահապումից				
Նվազեցումներ				
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	6,151	110	164,464	170,724
Ավելացումներ այդ թվում Վերազնահապումից	1,164	750	301,078	302,992
Նվազեցումներ	1,085			1,085
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	257			257
Կուտակված մաշվածություն				
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	1,254	45	0	1,298
Տարվա մաշվածությունը այդ թվում Վերազնահապումից	707			707
Նվազեցումներ				
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	1,961	45	0	2,006
Տարվա մաշվածությունը այդ թվում Վերազնահապումից	701	384		1,085
Նվազեցումներ	2			2
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	1,962			1,962
Հոսք հաշվեկշռային արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	700	428	0	1,128
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	4,190	65	164,464	168,719
	6,359	432	465,542	472,332

* 2024թ. ոչ նյութական ակտիվների ավելացումները հիմնականում ներառում են.

Անվանումը	000. դրամ
Կանոնադրական կապիտալի տարր	301,078
	301,078

4.10 Պաշարներ

	000 դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
Դեղորայք և բուժ պարագաներ	126,383	156,813
Վառելիք	963	378
Շինանյութ	87	1,168
Պահեստամասեր	927	713
Այլ նյութեր	21,339	23,323
Ապրանք		
Ընդամենը	149,700	182,395

4.11 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	000 դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, այդ թվում	207,679	184,504
1. Տրված կանխավճարներ	1,839	2,622
2. Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	200,644	165,092
3. Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	0	0
• Հողի հարկի գծով		
4. Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով	208	1,066
5. Դեբիտորական պարտքեր աշխատավարձի գծով		
6. Դեբիտորական պարտքեր գործ. վարձակալության գծով	4,988	4,394
7. Այլ ընթացիկ դեբիտորական պարտքեր		11,330
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուսպ	643	0
Զույր առևտրային դեբիտորական պարտքեր	207,036	184,504

4.12 Տրամադրված կարճաժամկետ փոխառություն

	000 դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
Մնացորդը տարեսկզբին	650	0
Փոխառության տրամադրում		
Փոխառության մարում		
Մնացորդը տարեվերջին	650	0

4.13 Դրամական միջոցների և դրանց համարժեքներ

	000 դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
Դրամարկդ		
Բանկային հաշիվներ	96,567	5,921
Դրամական միջոցներ ճանապարհին	3,259	6,206
Ընդամենը	99,826	12,127

4.14. Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումարը

4.14.1. Հարցադրված և վճարված կանոնադրական կապիտալ
 4.14.2 Ետ գնված բաժնետոմսեր չկան:
 4.14.3 Շահագրավելներ չեն հայտարարվել 2023թ. և 2024թ.:

4.15. Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ

4.15.1 Երկարաժամկետ վարկեր

Մնացորդ տարեկգրին

Ատաղնի է տարվա ընթացքում

Մարվել է տարվա ընթացքում

Մնացորդ տարեկգրին

Բացահայտում

Վարկերը ստացվել են Անրա բանկ ՔԲԸ-ի կողմից մինչև 23.06.2025թ. ը. 13%

գոյություն ունի

Վարկերը ստացվել են Անրա բանկ ՔԲԸ-ի կողմից մինչև 15.07.2025թ. ը. 13.5%

գոյություն ունի

Վարկերը ստացվել են Անրա բանկ ՔԲԸ-ի կողմից մինչև 23.06.2025թ. ը. 15%

գոյություն ունի

4.15.2 Երկարաժամկետ ֆինանսական վարձակադրություն

Մնացորդ տարեկգրին

Ատաղնի է տարվա ընթացքում

Մարվել է տարվա ընթացքում

Մնացորդ տարեկգրին

Բացահայտում

Ֆինանսական վարձակադրության պայմանագիրը կնքվել է Անրա Լիդինգ ՎԿ ՓԲԸ-ի հետ մինչև 18.11.2027թ. ը. 16% գոյություն ունի

Ֆինանսական վարձակադրության պայմանագիրը կնքվել է Անրա Լիդինգ ՎԿ ՓԲԸ-ի հետ մինչև 20.04.2027թ. ը. 14% գոյություն ունի

Ֆինանսական վարձակադրության պայմանագիրը կնքվել է Անրա Լիդինգ ՎԿ ՓԲԸ-ի հետ մինչև 20.11.2025թ. ը. 13.5% գոյություն ունի

000դրամ					
31.12.23թ.			31.12.24թ.		
Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս
172,016	203,695		132,398	147,355	
30,000	35,562	22,283	395,000	573,404	89,617
69,618	91,901		234,215	323,832	
132,398	147,355		293,183	396,927	

000դրամ					
31.12.23թ.			31.12.24թ.		
Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս
152,474	134,098		91,655	110,650	
13,000	17,564	12,969	159,000	203,327	19,475
28,044	41,013		98,181	154,672	
91,655	110,650		152,474	159,305	

4.16 Ակրիվներին վերաբերող շնորհներ

Մնացորդը տարեսկզբին

Շնորհի ստացում

Շնորհի ծախսում

Մնացորդը տարեվերջին

	000դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
	57,124	235,508
	206,695	373,942
	28,311	212,179
	235,508	397,271

4.17 Կարճաժամկետ փոխառություն

Մնացորդը տարեսկզբին

Փոխառության ստացում

Փոխառության մարում

Մնացորդը տարեվերջին

	000դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
	3,000	0
	9,000	
	12,000	
	0	0

4.18. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում

1. Կրեդիտորական պարտքեր գնումների գծով
2. Ստացված կանխավճար
3. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում
 - ԱԱՀ
 - Եկամտային հարկ
 - Գույքահարկ
 - Տույժ փուլանքների գծով
 - Դրոշմանիշային վճար
 - Բնապահպանական վճար

	000 դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
	616,589	609,976
	414,252	397,040
	1,228	789
	77,458	60,891
	631	3,999
	71,606	52,355
	4,831	3,754
	391	734

4. Կրեդիտորական պարտքեր դրոշմանիշային վճարի գծով

5. Կրեդիտորական պարտքեր սոց. ապ.վճարների գծով

6. Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

7. Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով

8. Կրեդիտորական պարտքեր այլ պարավորությունների գծով

9. Կրեդիտորական պարտքեր մասնակիցներին

(հիմնադիրներին)

	10,293	7,311
	106,851	138,135
	4,711	5,810
	1,796	0

4.19. Պահուսպ

Պահուսպ արձակուրդային վճարման գծով

Աշխատավարձ

	000 դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
	179,816	238,267
	179,816	238,267

4.20 Եկամուտներին վերաբերող շնորհներ

Մնացորդը տարեսկզբին

Շնորհի ստացում

Անհատույց ստացված պաշարների և այլ ակտիվների ծախսեր

Մնացորդը տարեվերջին

	000դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
	45,055	49,524
	152,877	232,617
	148,408	225,515
	49,524	56,626

5. Ֆինանսական գործիքներ

5.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.15-ում:

5.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

	000դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
Փոխառություններ	650	
Դեբիտորական պարտքեր	205,840	170,552
Մնացորդը դրամարկղում և բանկում	99,826	12,127
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ընդամենը	306,316	182,679

Ֆինանսական պարտավորություններ

	000դրամ	
	31.12.2023թ.	31.12.2024թ.
Վարկեր և փոխառություններ	224,053	445,657
Կրեդիտորական պարտքեր	525,814	609,976
Այլ ֆինանսական պարտավորություններ		
Ընդամենը	749,867	1,055,633

Տես՝ ծանոթագրություն 3.15-ը՝ յուրաքանչյուր ֆինանսական գործիքի կատեգորիայի գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրության համար:

6. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է պարտքային և իրացվելիության ռիսկերի:

7. Ֆինանսական ռիսկի գործոններ

7.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

7.2 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը վերաբերում է Ընկերության կողմից իր պարտավորությունները ժամանակին մարելուն և անմիջականորեն կապված է Ընկերության դրամական միջոցների հավաքագրման հետ, ինչը նկարագրված է վերը նշված պարտքային ռիսկերում:

8. Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

9. Պայմանականություններ

9.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող բաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել բնակչությունից դեբիտորական պարտքերի ժամանակին հավաքագրումը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված ղեկավարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

Հետևաբար, Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

10. Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը, բացառությամբ տրանսպորտային միջոցների պարտադիր ապահովագրությունից, ապահովագրված չէ իր ակտիվները: Ընկերությունը՝ իր ակտիվների և գործունեության ընդհատման արդյունքում հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

11. Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա է են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոնշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

12. Կապակցված կողմեր և գործարքներ նրանց միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են.

12.1 Վերահսկողության փոխահարաբերություն

Ընկերության բաժնետոմսերը պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, լիազորված մարմին՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ:

12.2. Ղեկավարության հատուցումները

Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմը ստացել է հետևյալ հատուցումները (տես ծանոթագրություն 5).

Ա.Ա.Հ	2023թ.	2024թ.
Աշխատավարձ և դրան հավասարեցված հատուցումներ	58,716	89,937
Ընդամենը	58,716	89,937

Տնօրեն

Գլխ. Հաշվապահ



Ա. Իսահակյան

Լ. Խաչատրյան